

## Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններ

Բովանդակություն

Ի գիտություն

1. Սահմանումներ
2. Քարտի օգտագործումը
3. Հաշվի ներկայացում
4. Վճարում
5. Գանձումներ և վճարներ
6. Տեղեկատվության տրամադրում
7. Կորցված կամ Քարտ
8. Հավելյալ քարտեր
9. Վեճերի լուծման կարգը և օրենսդրությունը
10. Այլ դրույթներ
11. Դադարեցում
12. Լրացուցիչ դրույթներ

Ի գիտություն

Նախքան քարտից օգտվելը խնդրում ենք ուշադիր կարդալ սույն պայմանները: Ստորագրելով Քարտի վրա և/կամ օգտագործելով այն՝ Դուք ընդունում եք ստորև նշված դրույթներն ու պայմանները և պարտավորվում եք գործել դրանց համաձայն:

1. Սահմանումներ

- 1.1. «Քարտապան»՝ ցանկացած անհատ, որը ստորագրել է Քարտի Դիմումը, որը հաստատվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից և/կամ ստորագրել կամ օգտագործել է Քարտը:
- 1.2. «Բանկ»՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, նրա իրավահաջորդները և նրա անունից գործող անձինք:
- 1.3. «Քարտ»՝ Բանկի կողմից Քարտապանին տրամադրած կրեդիտ կամ դեբետ քարտ:
- 1.4. «Քարտային հաշիվ»՝ Քարտի օգտագործման նպատակով Բանկում Առաջնային քարտապանի անունով բացված և սույն պայմանների համաձայն վարվող հաշիվ:
- 1.5. «Առաջնային քարտապան»՝ Քարտապան, որի անունով Քարտային հաշիվ է բացված Բանկում:
- 1.6. «Հավելյալ քարտապան»՝ անհատ, որի անունով Բանկը տրամադրում է Քարտ Առաջնային քարտապանի դիմումի համաձայն:
- 1.7. «Քաղվածք»՝ Բանկի կողմից պատրաստված Քարտային հաշվի ամսական քաղվածք, որում նշվում են սովորական դրույթաբան Քարտային հաշվի հետ կապված Առաջնային քարտապանի և Հավելյալ քարտապան(ներ)ի կատարած գործարքները, Բանկի գանձումները և վճարները և Բանկի նկատմամբ ֆինանսական պարտավորությունները (առկայության դեպքում):
- 1.8. «Գործարք»՝ Քարտապանի կողմից Քարտն ուղղակի կամ անուղղակի գործածելով Բանկին տրված ցանկացած հանձնարարական (Գործարք)-ի օրինակներն են՝ գործարքի անդորրագիրը, կանխիկի դուրսբերման ստացականը կամ փոստային պատվերի կտրոնը):
- 1.9. «Առևտրային կետ»՝ ցանկացած վայրում գտնվող այն հաստատությունը, որն ընդունում է Քարտը որպես վճարման միջոց, այդ թվում՝ խանութները, ռեստորանները, հյուրանոցները, օդային փոխադրումներ իրականացնող և փոստային ծառայություններ մատուցող ընկերությունները՝ ներառյալ պատվերների փոստային առաքմամբ զբաղվող կազմակերպությունները:
- 1.10. «Դուք», «Ձեր», «Նրան», «Նրա» կամ նման դերանունները վերաբերվում են Քարտապանին:

2. Քարտի օգտագործումը

- 2.1. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և Բանկի պահանջով պետք է վերադարձվի Բանկի լիազորված աշխատակցին Բանկի գործունեության իրականացման վայրում կամ առաքվի Բանկի մասնաճյուղերից մեկը փոստի միջոցով:

2.2. Քարտը ստանալուն պես Դուք պետք է անմիջապես ստորագրեք Քարտի հակառակ կողմի վրա՝ այն գերծ պահելով երրորդ անձանց կողմից օգտագործվելուց՝ Քարտը և Անձնական Ծածկագիրը (ԱՕ) մշտապես պահելով Ձեր անմիջական հսկողության տակ:

Քարտի և ԱՕ-ի հետ կապված ամբողջ ռիսկը կրում էք Դուք, և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ ԱՕ-ի տրամադրման և օգտագործման կապակցությամբ Ձեր կրած վնասների համար, եթե վնասը չի պատճառվել Բանկի մեղքով:

2.3. Դուք պետք է ի նկատի ունենաք, որ Քարտը վավեր է մինչև Քարտի վրա նշված տարվա համապատասխան ամսվա վերջին օրը, եթե այդպիսի ժամկետ առկա է: Սույնով Դուք պարտավորվում եք Քարտի ժամկետի ավարտին ոչնչացնել այն՝ կտրատելով մասերի մագնիսկան երիզի երկայնքով: Նոր Քարտը Ձեզ կուղարկվի Ձեր՝ Բանկին տրամադրած քաղվածքի առաքման վերջին հասցեով մինչ գործածվող Քարտի ժամկետի ավարտը: Նոր քարտը Ձեզ կտրամադրվի բացառապես Բանկի հայեցողությամբ՝ Ձեր Քարտային հաշվի պատմությունը վերանայելուց հետո:

Մեկ ամիս շարունակ Ձեր՝ Բանկին տրամադրած քաղվածքի առաքման վերջին հասցեով նոր Քարտի առաքումը հնարավոր չլինելու դեպքում, պատվիրված Քարտը կոչնչացվի:

2.4. Քարտը գործածելիս Դուք պետք է ստորագրեք գործարքի անդորրագիրը, կանխիկի դուրսբերման ստացականը կամ փոստի միջոցով առաքված պատվերի կտրոնը և պահպանեք Ձեր օրինակը: Գործարքի անդորրագրերի կամ կանխիկի ստացականների պատճենները Դուք կարող եք ստանալ Բանկից՝ լրացուցիչ վճարի դիմաց: Գործարքի ցանկացած անդորրագիր կամ կանխիկի դուրսբերման ցանկացած ստացական կամ փոստի միջոցով առաքված պատվերի ցանկացած կտրոն, որը անձամբ Ձեր կողմից ստորագրված չէ, բայց որը կարող է ճանաչվել որպես Ձեր կողմից վավերացված գործարք, հանդիսանում է Ձեր պարտավորությունը:

2.5. Քարտը կընդունվի այն Առևտրային կետերում, որտեղ որպես վճարման միջոց ընդունվում են քարտի վրա առկա վճարային համակարգերի նշանները կրող քարտերը: Չնայած այն փաստի, որ Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից Առևտրային կետերում կատարված գործարքների համար, Բանկը կօժանդակի Ձեզ հնարավոր սահմաններում: Բողոք ունենալու դեպքում Դուք պետք է անմիջապես տեղեկացնեք Բանկին՝ ներկայացնելով գործարքին առնչվող փաստաթղթերը: Որևէ առևտրային կետի նկատմամբ բողոքներ ունենալու դեպքում Դուք պարտավոր եք առաջացած խնդիրը կարգավորել ինքնուրույն: Այդ խնդիրը չկարգավորելու դեպքում Դուք չեք ազատվում Բանկի նկատմամբ ունեցած Ձեր պարտավորություններից:

2.6. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ Առևտրային կետի կողմից մատուցած որևէ ծառայության դիմաց գանձված և Ձեր Քարտային հաշվից ելքագրված որևէ հավելյալ վճարի համար:

2.7. Քարտի տրամադրումից հետո վեց ամսյա ընթացքում ոսկերչական իրերի, էլեկտրոնային ապրանքների գնման, կանխիկի դուրսբերման և էլեկտրոնային միջոցներով կատարված (ներառյալ Ինտերնետը և ինտերակտիվ հեռուստատեսությունը) գործարքները կհավաստագրվեն Բանկի հայեցողությամբ:

2.8. Դուք չպետք է օգտագործեք Քարտը որևէ անօրինական նպատակներով:

2.9. Եթե Դուք Քարտով վճարում եք կատարում՝ օգտագործելով էլեկտրոնային միջոցներ (ներառյալ Ինտերնետը և ինտերակտիվ հեռուստատեսությունը), ապա Դուք պետք է օգտվեք «secure payment site»-ից:

2.10. Դուք պարտավորություններ եք ստանձնում Բանկի կողմից Ձեզ տրամադրված բոլոր քարտային ծառայությունների և դրանց հետ կապված բոլոր գանձումների համար, անկախ Ձեր և Բանկի միջև կնքված պայմանագրի դադարելու հանգամանքից:

### 3. Հաշվի ներկայացում

3.1. Քարտի սպասարկման նպատակով Բանկը վարում է հաշիվ ( Քարտային հաշիվ ), որում գրանցվում են Առաջնային և Հավելյալ Քարտապան(ներ)ի Քարտ(եր)ի միջոցով կատարված ապրանքների կամ ծառայությունների գնման գործարքները, կանխիկի դուրսբերման գործարքները, գանձումները և վճարումները: Քարտային Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքները Քարտային Հաշվին գրանցելիս կիրառվում է Քարտային հաշվին գործարքը գրանցելու օրվա MasterCard International, Inc ընկերության կողմից սահմանած փոխարժեքը:

3.2. Բանկը կարող է սահմանել Քարտային հաշվի վարկային սահմանաչափ, որը ցանկացած պարագայում չպետք է գերազանցվի: Այնուամենայնիվ, Քարտային հաշիվը մեկ տարի շարունակ բավարար վարելուց հետո Դուք կարող եք դիմել Բանկին Ձեր Քարտի վարկային սահմանաչափը վերանայելու համար: Քարտի վարկային սահմանաչափի ցանկացած փոփոխություն իրականացվում է բացառապես Բանկի հայեցողությամբ:

3.3. Քարտի վարկային սահմանաչափը գերազանցելու դեպքում Բանկն իրավունք ունի գանձել սահմանաչափի գերազանցման տուգանք՝ ըստ գործող սակագների:

3.4. Եթե Քարտային հաշվի մնացորդը զրոյական չէ, կամ եթե Քարտային հաշվին գրանցվել են նոր գործարքներ, ապա Բանկը պատրաստում է ամսական Քաղվածք՝ հետևյալ տվյալներով:

ա) Քաղվածքի ամսաթիվ՝ քաղվածքի պատրաստման օր:

բ) Վերջնական մնացորդ (առկայության դեպքում)՝ Քաղվածքի օրվա դրությամբ Քարտային Հաշվի մնացորդը:

գ) Վճարման ենթակա նվազագույն գումար (առկայության դեպքում)՝ այն նվազագույն գումարը, որը պետք է մարվի մինչև Վճարման Օրը: Այս գումարը ներառում է ժամկետանց և սահմանաչափը գերազանցող գումարները:

դ) Վճարման Օր՝ այն օրն է մինչև որի ավարտը Վճարման ենթակա նվազագույն գումարը պետք է ստացվի Բանկի կողմից:

ե) Սահմանաչափը գերազանցող գումար՝ Քարտի սահմանաչափից ավել ծախսված գումար: Այս գումարն ենթակա է անհապաղ վճարման:

զ) Ժամկետանց գումար՝ նախորդ Քաղվածքներում նշված, բայց դեռ չվճարված Վճարման ենթակա նվազագույն գումար: Այս գումարը ներառվում է ընթացիկ Վճարման ենթակա նվազագույն գումարի մեջ և ենթակա է անհապաղ վճարման:

է) Օրենքով պահանջվող այլ տեղեկություններ:

3.5 Ամսական քաղվածքը չստանալու դեպքում Դուք պարտավոր եք կապվել Բանկի հետ և վճարել Վճարման ենթակա նվազագույն գումար մինչև Վճարման Օրը:

3.6. Ապրանքների կամ ծառայությունների գնումը և դրանց վերադարձման/չեղարկման հետևանքով կատարվող հատուցումը հանդիսանում են երկու տարբեր Գործարքներ: Դուք պետք է վճարեք Քաղվածքում արտացոլված գնման Գործարքի համար՝ լրացուցիչ վճարներից խուսափելու նպատակով: Հատուցման գումարը (հանած Գործարքի չեղարկման համար տուգանքները) կմուտքագրվի Քարտային Հաշվին Առևտրային կետից այն ստանալուց հետո: Եթե հատուցման գումարը Ձեր Քարտային հաշվին մուտք չի արվել գործարքի չեղարկման օրվանից 30 օրվա ընթացքում, ապա այդ մասին Դուք պետք է տեղեկացնեք Բանկին: Ծանուցման հետ միասին Բանկին անհրաժեշտ է ուղարկել նաև չեղարկված Գործարքի անդորրագրի օրինակը:

#### 4. Վճարում

4.1. Բանկային Մուրհակների և/կամ վճարման հանձնարարականների միջոցով կատարված վճարումները Քարտային գործարքների հետևանքով առաջացած պարտքերի մարման նպատակով պետք է դուրս գրված լինեն Բանկի անունով և Ձեր Քարտային հաշվի համարով: Այդպիսի Բանկային մուրհակների և վճարման հանձնարարականների կանխիկացման/ինկասավորման համար Քարտապանը միջնորդավճար է վճարում սահմանված սակագներով: Կանխիկով, Բանկային մուրհակներով և վճարման հանձնարարականներով ստացված վճարումները կմուտքագրվեն Քարտային Հաշվին մինչև գումարների ստացմանը հաջորդող աշխատանքային օրվա վերջը:

4.2. Դուք կարող եք Քաղվածքի Վերջնական մնացորդը վճարել ամբողջությամբ կամ մասնակի (առնվազն Վճարման ենթակա նվազագույն գումարի չափով): Քաղվածքի Վերջնական մնացորդը մինչև Բանկի կողմից սահմանված Վճարման օրը կամ այդ օրը ամբողջությամբ վճարելու դեպքում Վերջնական մնացորդի գումարի վրա տոկոսներ չեն հաշվարկվում: Քարտի վարկային սահմանաչափի սահմաններում դուրս բերված կանխիկ գումարների նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ Բանկի կողմից տվյալ տեսակի քարտային ծառայությունների սակագներում սահմանված դրույքաչափով՝ ելքագրման օրվանից մինչև ամբողջ մնացորդի մարումը:

4.3. Քաղվածքի Վերջնական մնացորդը մարելու նպատակով Դուք կարող եք մինչև Վճարման օրը կամ Վճարման օրը պահանջվող գումարը անմիջապես մուտքագրել Քարտային հաշվին: Դուք կարող եք նաև Վերջնական մնացորդի գումարի չափով դրամական միջոցներ ապահովել Բանկում սպասարկվող և Ձեր ավտոմատ զանձման հանձնարարականում նշված Բանկային հաշվին: Այս դեպքում, կախված Ձեր ավտոմատ զանձման հանձնարարականից, Բանկը Ձեր Բանկային հաշվից կգանձի Վերջնական մնացորդի ամբողջ գումարը կամ Վճարման ենթակա նվազագույն գումարը՝ Վճարման օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

4.4. Եթե Դուք վճարում եք կատարում քաղվածքի ամբողջ Վերջնական մնացորդը մարելու նպատակով Վճարման օրվանից հետո կամ ցանկանում եք հետաձգել պարտքի մարումը և կատարել Քաղվածքի վերջնական մնացորդի մասնակի մարում (բայց Վճարման ենթակա նվազագույն գումարից ոչ պակաս), Դուք պետք է վճարեք տոկոսներ Բանկի կողմից տվյալ տեսակի քարտային ծառայությունների սակագներում սահմանված դրույքաչափով: Վերոնշյալ տոկոսները կհաշվարկվեն Քաղվածքի Վերջնական մնացորդը կազմող գումարների վրա՝ դրանց Քարտային հաշվին գրանցման օրվանից մինչև ամբողջությամբ մարումը և կելքագրվեն հաջորդ Քաղվածքի օրը:

4.5. Եթե Վճարման ենթակա նվազագույն վճարի գումարը չի վճարվել մինչև Վճարման օրը, ապա Քաղվածքի օրը քարտային հաշվից գանձվում է ուշացման վճար՝ Բանկի կողմից տվյալ տեսակի քարտային ծառայությունների սակագներում սահմանված գումարով: Բանկը իրավունք ունի նաև կիրառել տուգանային

տոկոսադրույք՝ Բանկի կողմից տվյալ տեսակի քարտային ծառայությունների սակագներում սահմանված դրույքաչափով՝ Վճարման ենթակա նվազագույն վճարի գումարը մինչև Վճարման Օրը չվճարելու դեպքում:

4.6. Անկախ Քարտային հաշվի արժույթից տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով:

Տոկոսագումարները, որպես կանոն, ելքագրվում են Քարտային հաշվից, ընդ որում, արտարժույթային Քարտային հաշվի դեպքում Բանկն իրավունք ունի ելքագրված գումարները փոխարկել ՀՀ դրամի՝ ելքագրման օրվա դրությամբ MasterCard International, Inc ընկերության կողմից սահմանված փոխարժեքով:

4.7. Եթե Դուք առարկություններ ունեք Քաղվածքում արտացոլված որևէ գործարքի վերաբերյալ, խնդրում ենք այդ մասին տեղեկացնել Բանկին Քաղվածքի օրվանից 30 օրյա ժամկետում: 30 օրն անցնելուն պես, բոլոր գործարքները համարվում են ընդունելի և ճիշտ: Բանկն իր հայեցողությամբ՝ բացառիկ դեպքերում, կարող է ընդունել 30 օրից ավել վաղեմություն ունեցող գործարքների վերաբերյալ առարկություններ:

4.8. Առաջնային քարտապանի պահանջով Բանկը կարող է տրամադել վերջին վեց ամսվա քաղվածքների կրկնօրինակներ Բանկի կողմից սահմանված սակագներով նախատեսված վճարի դիմաց:

4.9. Բանկը իրավունք ունի իր հայեցողությամբ, առանց հատուկ ծանուցելու, իրեն պարտք գումարները վերականգնելու նպատակով նշանակել գործակալներ կամ օրենքի սահմաններում ձեռնարկել ցանկացած այլ միջոցներ:

4.10. Դուք պարտավոր եք Բանկին հատուցել պարտքերի վերականգնման նպատակով կատարված իրավաբանական և բոլոր այլ տեսակի ծախսերը:

4.11. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ որոշելու ցանկացած հիմնական գումարների, տոկոսների, գանձումների, միջնորդավճարների և Բանկին պարտք այլ գումարների մարման հերթականությունը:

## 5. Գանձումներ և վճարներ

5.1. Բոլոր գանձումները և վճարները ելքագրվում են Ձեր Քարտային հաշվից՝ համաձայն Բանկի սահմանված սակագների և վերադարձման ենթակա չեն:

5.2. Կանխիկի դուրսբերման բոլոր գործարքների համար գանձվում է վճար՝ Բանկի կողմից սահմանված սակագներով, որը ելքագրվում է Ձեր Քարտային հաշվից կանխիկի դուրսբերման ժամանակ: Կանխիկի դուրսբերման դեպքում հաշվարկվում է տոկոս, որը ելքագրվում է Քարտային հաշվից քաղվածքի օրը:

5.3. Բոլոր գործարքները Քաղվածքում գրանցվում են Քարտային հաշվի արժույթով, ընդ որում այլ արժույթով կատարված գործարքների գրանցման համար կիրառվում է տվյալ արժույթի՝ Քարտային հաշվին գործարքի գրանցման օրվա փոխարժեքը:

Սակագներով նախատեսված և Քաղվածքում արտացոլված բոլոր գանձումները և վճարները գանձվում են ՀՀ դրամով:

Սակագներով նախատեսված վճարները և գանձումները Բանկի կողմից որպես կանոն գանձվում են Քարտային Հաշվից, ընդ որում արտարժույթային քարտային հաշվի դեպքում Բանկին իրավունք է վերապահվում գանձվելիք գումարի չափով արտարժույթը գանձման օրվա դրությամբ MasterCard International, Inc ընկերության կողմից սահմանված փոխարժեքով փոխանակել ՀՀ դրամի և գանձել:

## 6. Տեղեկատվության տրամադրում

6.1. Բանկի պահանջով Դուք պարտավոր եք Բանկին տրամադրել ցանկացած տեղեկություններ, որոնք Բանկը համարում է անհրաժեշտ ստանալու: Դուք նաև լիազորում եք Բանկին իր հայեցողությամբ ստուգել ցանկացած աղբյուրներից և ցանկացած եղանակով ստացված տեղեկությունները: Տեղեկություններ չտրամադրելու կամ սխալ տեղեկություններ տրամադրելու դեպքում Բանկը, իր հայեցողությամբ, կարող է մերժել նոր Քարտի տրամադրումը կամ անմիջապես չեղարկել Քարտը՝ պահանջելով Քարտային Հաշվին առկա պարտքերի անհապաղ մարում:

6.2. Սույնով Դուք ճանաչում և ընդունում եք, որ Բանկը բացառիկ իրավունք ունի վաճառելու կամ փոխանցելու Ձեր Քարտային հաշվին առկա պարտքերը իր ընտրությամբ մեկ այլ երրորդ կողմի, և այդ մասին Բանկի գրավոր ծանուցումը պարտավորեցնում է Ձեզ ընդունել ցանկացած այդպիսի երրորդ կողմին որպես պարտատեր և նրան վճարել պարտք գումարները, ինչը կազատի Ձեզ Բանկի նկատմամբ այդպիսի գումարների հետ կապված ցանկացած պարտավորությունից: Վերոհիշյալի կապակցությամբ բոլոր ծախսերը ելքագրվում են Քարտային հաշվից:

6.3. Քարտային հաշվի առկայության և Ձեր կողմից Քարտի օգտագործման կապակցությամբ Բանկի նկատմամբ ստանձնված պարտավորությունների չկատարման դեպքերին վերաբերվող տեղեկությունները կարող են գրանցվել վարկային ռեգիստրում և կարող են հասանելի դարձվել այլ փոխատուներին՝ (բանկերին, ֆինանսավարկային կազմակերպություններին և նման այլ կազմակերպություններին) Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների կողմից հետագայում վարկային դիմումների քննարկման, ինչպես նաև հնարավոր խարդախությունների կանխման նպատակով՝ առանց Ձեր հետագա բանավոր կամ գրավոր համաձայնության:

Հաճախորդը լիազորում է Բանկին, իր հայեցողությամբ և առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, այլ բանկերին և վարկային կազմակերպություններին, ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ տեղեկանքներ: Բանկը իրավունք ունի տվյալների մշակման նպատակով Հաճախորդի սպասարկման կապակցությամբ հայտնի դարձած ցանկացած տեղեկություններ տրամադրել այլ բանկերի և կազմակերպությունների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, որոնց խախտման համար պատասխանատու է Բանկը: Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված/տնօրինվող/ստացված միջոցների շրջանառությունը արգելված է: Հաշվի առնելով օրենքի պահանջը և հետևելով «փողերի լվացման» վերաբերյալ միջազգային իրավական նորմերին և ընդունված պրակտիկային՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարել ցանկացած գումարների/արժեքների ծագման մասին, որոնք առկա կամ մուտքագրված են կամ մուտքագրվում են Հաճախորդի կողմից: Բանկը իրավունք ունի պահանջել իրեն ներկայացնել բավարար ապացույցներ՝ այդ միջոցների ծագման օրինականության վերաբերյալ: Բանկը իրավունք ունի արգելել և կասեցնել կասկածելի գումարների տնօրինումը և/կամ օգտագործումը և/կամ տիրապետումը Հաճախորդի կողմից՝ մինչև բավարար ապացույցներ ներկայացնելը/ստանալը: Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բանկին վերը նշվածի կապակցությամբ պատճառված բոլոր տեսակի վնասները և հատուցել բոլոր տեսակի ծախսերը: Հաճախորդը գիտակցում և համաձայնվում է, որ Բանկը, ՀՀ գործող օրենսդրության սահմաններում, պարտավոր է կատարել համապատասխան երկրների օրենքների, այլ իրավական ակտերի և իրավապահ մարմինների պահանջները, որոնք վերաբերվում են, ի թիվս այլոց, ահաբեկիչների և հետախուզման մեջ գտնվող այլ անձանց ֆինանսավորման կանխարգելմանը: Ոչ Բանկը, և ոչ Բանկի գործընկեր հանդիսացող որևէ այլ կազմակերպություն պատասխանատվություն չեն կրում որևէ անձի կողմից կրած վնասների և կորուստների համար (անկախ նրանից, թե դա ուղղակի թե անուղղակի վնաս է, ներառյալ սպասվելիք եկամտի կամ տոկոսների վճարման կորուստը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են նման պահանջները կատարելու հետևանքով:

## 7. Կորցված Քարտ

7.1. Քարտի կորստի դեպքում Դուք պետք է տեղեկացնեք Բանկին կամ ԱրՔա պրոցեսինգային կենտրոնին: Չնայած, որ Քարտի կորստի մասին կարելի է հաղորդել ցանկացած եղանակով՝ Դուք պետք է ծանուցեք Բանկին այդ մասին նաև գրավոր:

7.2. Ձեր պատասխանատվությունը այն գործարքների համար, որոնք կատարվել են Բանկին Քարտի կորստի մասին գրավոր ծանուցելուց հետո, սահմանափակվում է Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվող և սակագներում նշված գումարով:

7.3. Եթե Քարտի կորստից հետո՝ մինչ այդ մասին Ձեր կողմից Բանկին գրավոր ծանուցելը, Քարտի միջոցով կատարվում են գործարքներ, ապա դուք պատասխանատվություն եք կրում Քարտային հաշվից ելքագրված նման գումարների համար: Սույնով Դուք պարտավորվում եք Բանկին ամբողջովին հատուցել Քարտի կորստի կամ երրորդ անձանց կողմից անօրինական օգտագործման հետևանքով առաջացած պատասխանատվության, կորուստների, վնասների և ծախսերի դիմաց այն դեպքում, երբ Քարտը կորել է և Բանկը այդ մասին չի տեղեկացվել կամ եթե Քարտը անօրինական օգտագործվել է մինչև Բանկին այդ մասին տեղեկացնելը:

7.4. Բանկը սահմանված վճարի դիմաց իր հայեցողությամբ կարող է տրամադրել նոր Քարտ, այն պայմանով, որ Դուք բոլոր առումներով կատարել եք սույն պայմանների պահանջները:

7.5. Կորցրած Քարտը գտնելու դեպքում Դուք չպետք է օգտագործեք այն առանց Բանկի համաձայնության:

## 8. Հավելյալ քարտեր

8.1. Առաջնային Քարտապանը Քարտային հաշվով գործարքներ իրականացնելու համար կարող է դիմել Բանկին Հավելյալ Քարտապան(ներ)ին հավելյալ Քարտ(եր) տրամադրելու խնդրանքով:

8.2. Առաջնային Քարտապանը ընդունում է, որ իր և ցանկացած Հավելյալ Քարտապան(ներ)ի կողմից կատարված գործարքների գումարը չպետք է գերազանցի Քարտային Հաշվի կրեդիտային սահմանաչափը:

8.3. Առաջնային Քարտապանը պարտավորվում է Բանկին փոխհատուցել Քարտային Հաշվին գրանցված բոլոր գործարքների, վճարների և ծախսերի գումարները, ինչպես նաև Քարտային Հաշվի այլ պարտքերը, ներառյալ Հավելյալ Քարտապան(ներ)ի կողմից կատարված գործարքների գումարները:

8.4. Առաջնային Քարտապանը ընդունում է, որ Հավելյալ Քարտ(եր)ի ժամկետը լրանալիս դրանք կարող են վերաթողարկվել և Հավելյալ Քարտապան(ներ)ին տրամադրվել առանց Առաջնային Քարտապանին այդ մասին նախապես ծանուցելու:

8.5. Առաջնային Քարտապանը պարտավորվում է Հավելյալ Քարտապան(ներ)ի հետ հաստատել/վավերացնել գործարքները, քանի որ Հավելյալ Քարտապան(ներ)ին առանձին Քաղվածքներ չեն տրամադրվելու:

8.6. Առաջնային Քարտապանը կարող է չեղարկել հավելյալ Քարտը՝ Բանկին այդ մասին գրավոր ծանուցելով:

8.7. Հավելյալ Քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Առաջնային Քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկացման, ինչպես նաև նման այլ դեպքերի մասին: Հավելյալ Քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) նաև չօգտագործել Քարտը Առաջնային Քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկացման, ինչպես նաև նման այլ դեպքերի մասին տեղեկանալու պահից:

8.8. Առաջնային Քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկացման, դեպքում Հավելյալ Քարտապան(ներ)ը համապարտ պատասխանատվություն է(են) կրում Քարտային Հաշվին առկա բոլոր պարտքերի համար:

## 9. Վեճերի լուծման կարգը և օրենսդրությունը

9.1. Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը ենթակա են ՀՀ դատարանների իրավասությանը: Սույն Տրամադրման Պայմաններով նախատեսված ծառայությունների հետ կապված և սույն Տրամադրման Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Սույն Տրամադրման Պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի Տրամադրման Պայմանների անգլերեն տարբերակի նկատմամբ:

## 10. Այլ դրույթներ

10.1. Բանկի նկատմամբ Առաջնային Քարտապանի պարտավորությունները մարելու նպատակով՝ Բանկն առանց նախնական ծանուցման կարող է միավորել Քարտային Հաշվի Վերջնական Մնացորդն Առաջնային Քարտապանի Բանկում սպասարկվող այլ հաշիվների հետ և հաշվանցել այդպիսի հաշիվներին առկա գումարները Քարտային Հաշվի հետ կապված Բանկին պարտք գումարների դիմաց:

Առաջնային Քարտապանի կողմից նշված վճարման հաշվին միջոցների բացակայության դեպքում, Բանկն իրավունք ունի Քարտային Հաշվին առկա պարտավորության գումարը ելքագրել Առաջնային Քարտապանի այլ հաշվից կամ հաշիվներից: Եթե այդ գումարի արժույթը տարբեր է ելքագրվող Հաշվի արժույթից, ապա Բանկն իրավունք ունի ելքագրման նպատակով կատարել փոխանակման գործարք՝ համաձայն գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխանակման արժեքի:

10.2 Դուք կարող եք Բանկում սպասարկվող ձեր բանկային հաշվից Քարտային հաշվին դրամական միջոցների փոխանցում իրականացնել Բանկի կողմից տրամադրված հեռախոսահամարով Բանկին վճարման հանձնարարականներ ներկայացնելով: Դուք համաձայնվում եք, որ Բանկը կկատարի վերոնշյալ ճանապարհով ստացված վճարման հանձնարարականները ձեր Քարտի դիմումում նշված գաղտնաբառի ստուգման միջոցով վճարման հանձնարարականները ուղարկող անձի ինքնությունը պարզելու միջոցով:

Դուք համաձայնվում եք նաև, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրի երրորդ անձանց կողմից ձեր Քարտի դիմումում նշված գաղտնաբառի չլիազորված օգտագործման արդյունքում ձեր կրած վնասների համար և հրաժարվում եք այդ կապակցությամբ Բանկին պահանջներ ներկայացնելու ձեր իրավունքից:

10.3. Դուք պարտավորվում եք անհապաղ գրավոր տեղեկացնել Բանկին Ձեր աշխատավայրի կամ բնակավայրի հասցեի կամ հեռախոսահամարների, ինչպես նաև Քարտի Տրամադրման Դիմումի մեջ նշված այլ տեղեկություններում փոփոխության վերաբերյալ:

10.4. Բանկն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ վերանայել Քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները և արտոնությունները, ինչպես նաև փոփոխել սույն պայմանները և սակագները (այդ թվում՝ տոկոսադրույքները) Ձեզ այդ մասին տեղեկացնելով Ձեզ հետ համաձայնեցված եղանակով: Դուք պարտավոր եք ղեկավարվել փոփոխված պայմաններով, քանի դեռ նախքան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը Քարտը չեղարկելու նպատակով այն չեք վերադարձրել Բանկին:

10.5. Դուք ընդունում եք, որ Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների համար:

10.6. Ձեր կողմից Քարտային հաշվին գործարքներ կատարելու նպատակով երրորդ անձանց լիազորագրեր (այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված) տալու դեպքում և նշված լիազորագրերի օրինականության կապակցությամբ կասկածներ առաջանալու դեպքում, Բանկն իրավունք ունի նշված լիազորագրերը ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննության՝ իսկությունը պարզելու համար և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում այս կապակցությամբ առաջացած ուշացումների կապակցությամբ Ձեր կրած վնասների համար:

10.7. Ձեր կողմից Քարտային հաշվով գործառնություններ կատարելու կապակցությամբ հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում Բանկը իրավունք ունի նշված փաստաթղթերը ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննության՝ իսկությունը պարզելու համար, և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում այդ կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով առաջացած ուշացումների հետևանքով Ձեր կրած վնասների համար:

## 11. Դադարեցում

11.1. Առաջնային Քարտապանը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել Բանկի հետ պայմանագիրը, այդ մասին Բանկին գրավոր տեղեկացնելով և վերադարձնելով կտրատված Քարտը և բոլոր Հավելյալ քարտ(եր)ը և մարելով Բանկին պարտք բոլոր գումարները: Առաջնային Քարտապանը կամ Հավելյալ Քարտապանը կարող են դադարեցնել պայմանագիրը Հավելյալ քարտի մասով այդ մասին գրավոր տեղեկացնելով Բանկին:

11.2. Բանկը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն պայմանագիրը՝ չեղարկելով Քարտը առանց որևէ պատճառաբանության: Դուք պարտավոր եք Քարտը ոչնչացնել՝ պարտադիր կտրատելով այն մասերի մագնիսական երիզի երկայնքով:

11.3. Բանկի ծանուցումները ուղարկվում են Ձեզ՝ Բանկին տեղեկացված Ձեր վերջին հասցեով/տվյալներով:

11.4. Քարտային հաշվի վերջնական մնացորդը, ինչպես նաև Քարտի միջոցով իրականացված, բայց դեռ չգրանցված գործարքների գումարները ցանկացած պատճառով պայմանագրի դադարեցման դեպքում կամ Քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկացման, դեպքում անմիջապես համարվում են Բանկին վճարման ենթակա և պետք է ամբողջությամբ մարվեն: Բանկը իրավունք ունի պարտք գումարները, այդ թվում ծախսերը, իրավաբանական ծախսերը, տոկոսները և վճարները պահանջել Քարտապանի իրավահաջորդներից՝ վերջինիս մահվան դեպքում: Դա որևէ կերպ չի ազդում Բանկին պարտք գումարների նկատմամբ տոկոսներ հաշվարկելու և վճարներ գանձելու Բանկի իրավունքի վրա:

11.5 Բոլոր այն գործարքները, որոնք կներկայացվեն քարտային հաշվին քարտը փակելուց հետո 45 օրվա ընթացքում ենթակա են անհապաղ վճարման:

## 12. Լրացուցիչ դրույթներ

12.1. Մաստերքարտ/ԱրՔա տեսակի քարտերի Քարտապանների համար գործում է շուրջօրյա Թեժ Գիծ (հեռախոսահամարը նշված է քարտի դարձերեսին):

12.2. Քարտային հաշվին մուտքագրված գումարի շտապ ակտիվացման համար Մաստերքարտ/ԱրՔա Քարտապանները կարող են գանգահարել Թեժ Գիծ, որի համար կգանձվի վճար՝ Մաստերքարտի/ԱրՔա քարտի սակագներով սահմանված չափով: Վերոնշյալ վճարը կգանձվի Քարտապանի Քարտային հաշվից:

12.3. Որոշ քարտային ծառայությունների տրամադրման դեպքում Բանկը կարող է իր հաշվին Քարտապանի համար ձեռք բերել որոշակի ապահովագրական ծառայություններ և Քարտապանը լիազորում է Բանկին նշված ապահովագրական ծառայությունների ձեռք բերման նպատակով Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններին տրամադրել Քարտապանի անհատական տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ, հասցե, անձնագրի տվյալներ, և այլն):